



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից, ԿՕՍ-ների ոչնչացման միջազգային ցանցի (IPEN) ֆինանսական աջակցությամբ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի և IPEN-ի նախաձեռնությամբ 2017 թ.-ի հոկտեմբերի 22-28-ը հայտարարված «Կապարային թունավորումների կանխարգելման միջազգային շարժառիթ» քարոզարշավի շրջանակում:

Հայաստանում գործում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունված՝ 2001 թ.-ի հունիսի 26-ին), որով արգելվում է արտադրանքի վերաբերյալ ոչ հավաստի տեղեկատվության տրամադրումը: Շարքային սպառողները և հանրային նշանակության կառույցների ղեկավարները պետք է գիտակցված մոտեցում ցուցաբերեն և օգտագործեն միայն կապար չպարունակող ներկեր բոլոր այն շինությունների ներքին և արտաքին հարդարման աշխատանքներում, որտեղ երեխաներն ամենից հաճախ են գտնվում (տներ, դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ, զբոսայգիներ, խաղահրապարակներ և այլն):

- Հանրային առողջապահության հարցերով զբաղվող խմբերը, սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության կազմակերպությունները և այլ շահագրգիռ կազմակերպություններ պետք է օժանդակեն կապարային ներկերի վերացման նախաձեռնություններին և իրականացնեն մարդկանց, հատկապես՝ երեխաների առողջության վրա կապարային ներկերի, հողում և փոշու մեջ պարունակվող կապարի և կապարի այլ աղբյուրների ազդեցության մասին իրազեկության բարձրացման և շահերի պաշտպանության քարոզարշավներ:
- Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է միավորեն իրենց ջանքերն՝ արդյունավետ քաղաքականության խթանման համար, որը կհանգեցնի Հայաստանում կապար պարունակող ներկերի վերացմանը:



**Պաշտպանենք մեր երեխաների առողջության և առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքները՝ կապարային ներկերի վերացման միջոցով**

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
 ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24բ,  
 Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 52 36 04  
 Էլ. փոստ՝ office@awhhe.am  
 Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» (ՀԿՀԱԱՇՄ) ՀԿ-ն ԿՕԱ - ների ոչնչացման միջազգային ցանցի (IPEN) հետ 2016 թ.-ին իրականացրած «Կապարը ներկերում» համատեղ ծրագրի շրջանակում կատարել է Հայաստանում վաճառվող ներկերի շուկայի ուսումնասիրություն, նմուշառում և նմուշների հետազոտությունների արդյունքների վերլուծություն: Կատարվել է 7 երկրի արտադրության 20 ապրանքանիշի 49 տարբեր տարողությամբ տարաներով ներկերի նմուշառում: Ուսումնասիրության մեջ ներառված ներկերը ներկայացնում են այն ապրանքանիշերը, որոնք մեծ պահանջարկ ունեն հանրապետությունում: Ամերիկյան

եղել է միջազգային չափորոշիչից (90 մաս միլիոնի մեջ /ppm/) ցածր, վկայում է այն մասին, որ ներկեր արտադրող շատ երկրներում կիրառվում են կապար չպարունակող ներկերի արտադրության տեխնոլոգիաներ:

Ուսումնասիրության արդյունքները բավարար հիմք են հանդիսանում նոր օրենսդրության ընդունման և կիրառման համար, որով կարգելի կապարի՝ միջազգային նորմը գերազանցող պարունակությամբ ներկերի արտադրությունը, ներկումը, արտահանումը, վաճառքը և օգտագործումը:

**Կապարային ներկերի հիմնախնդրի լուծման համար ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ն և IPEN-ը հանդես են գալիս հետևյալ առաջարկություններով.**

- Բարձրացնել դեկորատիվ ներկերում կապարի պարունակության վերաբերյալ հայաստանյան նորմի վերանայման և խստացման հարցը: Միացյալ Նահանգներում, Ֆիլիպիններում, Նեպալում և շատ այլ երկրներում դեկորատիվ ներկերում կապարի պարունակության թույլատրելի քանակության համար ընդունված է 90 ppm չափորոշիչը:
- Համապատասխան պատասխանատու գերատեսչություններին հանձնարարել մշակել օրենք կամ ենթաօրենսդրական ակտ, որով կարգելի 90 ppm-ից բարձր քանակությամբ կապար պարունակող ներկերի արտադրությունը, ներկումը, արտահանումը և օգտագործումը: Այդ գերատեսչությունները պետք է ներկեր արտադրող ընկերություններից պահանջեն, որպեսզի տարաների պիտակները պարունակեն լիարժեք տեղեկատվություն ներկերում առկա թունավոր նյութերի



քանակությունների մասին, ինչպես նաև նախագուշացումներ հնարավոր վտանգների, օրինակ՝ կապարային ներկերով ներկված մակերեսների վնասման հետևանքով կապար պարունակող փոշու առաջացման մասին:

- Լաքաներկանյութեր արտադրող ընկերություններից պահանջել անմիջապես դադարեցնել կապարի օգտագործումը ներկերի արտադրությունում, իսկ կապարից ազատ ներկեր արտադրող ընկերություններից պահանջել, որպեսզի անցնեն իրենց արտադրանքի հավաստագրման ընթացակարգեր երրորդ կողմի հավաստագրման մարմնի կողմից, ինչը կնպաստի սպառողների՝ կապար չպարունակող ներկերի ընտրության հնարավորությունների ընդլայնմանը:
- Սպառողները պետք է արտադրողներից պահանջեն արտադրել, իսկ մանրածախ առևտրով զբաղվողներից՝ վաճառել միայն կապար չպարունակող ներկեր, ինչպես նաև տրամադրել լիարժեք տեղեկատվություն լաքաներկանյութերում կապարի պարունակության մասին: Հարկ է նշել, որ



«Ֆորենսիկ Անալիտիկ» լաբորատորիայում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ 11 նմուշում կապարի պարունակությունը գերազանցել է ներկերում կապարի թույլատրելի պարունակության համար Հայաստանում ընդունված չափորոշիչը (5000 մաս միլիոնի մեջ /ppm/): Մինևույն ժամանակ, այն փաստը, որ 49 նմուշից 20-ում կապարի պարունակությունը